# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2001 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 22-Ի N 125 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**ՆԱԽԱԳԻԾ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**__________ի 2019 թվականի N ______-Ն**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2001 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 22-Ի N 125 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի փետրվարի 22-ի «Հայաստանի Հանրապետության պետական կառավարչական հիմնարկների տիրապետմանը, տնօրինմանն ու օգտագործմանը հանձնված (ամրացված) գույքի վարձակալության, ինչպես նաև մինչև մեկ տարի ժամկետով պետական ոչ առևտրային կազմակերպություններին ամրացված գույքի վարձակալության տրամադրման գործընթացը կանոնակարգելու մասին» N 125 որոշման.

- 3-րդ և 4-րդ կետերում, հավելված 1-ի 10-րդ կետում և հավելված 5-ի 2-րդ կետի 2-րդ ենթակետի «բ» պարբերությունում «սննդի կազմակերպման համար տրամադրվող տարածքների» բառերից հետո լրացնել «, պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից ֆինանսավորվող մարզաձևերի ֆեդերացիաներին կրթական և մարզական միջոցառումների կազմակերպման համար տրամադրվող մարզադահլիճների» բառերով.
- 3-րդ և 4-րդ կետերը, հավելված 1-ի 10-րդ կետը և հավելված 5-ի 2-րդ կետի 2-րդ ենթակետի «բ» պարբերությունը լրացնել նոր պարբերությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«Մարզաձևերի ֆեդերացիաները, որոնք չեն ֆինանսավորվում ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից, կրթական և մարզական միջոցառումներ կազմակերպելու համար տրամադրվող մարզադահլիճների վարձակալության համար սույն կետով սահմանված բացառությունից կարող են օգտվել միայն ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության համաձայնության դեպքում:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից: